# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ՝ ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Գործուղված անձը՝** Աննա Գևորգյան

**Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության վճիռների կատարման և կոնվենցիոն պահանջների ապահովման բաժնի առաջատար մասնագետ

**Գործուղման վայրը և ժամկետները՝** Դանիայի Թագավորություն (Կոպենհագեն), 2018 թվականի մարտի 21-ից 23-ը

**Հրավիրող կողմը՝** Դանիայի արտաքին գործերի նախարարություն

**Գործուղման նպատակը՝** մասնակցություն «Խոշտանգումների դեմ պայքարը ձերբակալման և նախնական կալանքի պայմաններում» վերտառությամբ գիտաժողովին

**Քննարկված թեմաները՝** խոշտանգումների կանխարգելմանն ուղղված իրավական և ընթացակարգային երաշխիքների կիրառումը, հարցաքննությունների վարման լավագույն մեթոդները և տակտիկական հնարքները

**Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

2018 թվականի մարտի 22-23-ը ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության վճիռների կատարման և կոնվենցիոն պահանջների ապահովման բաժնի առաջատար մասնագետ Աննա Գևորգյանը մասնակցել է «Խոշտանգումների դեմ պայքարը ձերբակալման և նախնական կալանքի պայմաններում» վերտառությամբ գիտաժողովին: Գիտաժողովը կազմակերպվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում Դանիայի նախագահության շրջանակներում՝ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող

վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի, «Խոշտանգումների դեմ կոնվենցիայի նախաձեռնություն» և «Խոշտանգումների կանխարգելման դանիական ինստիտուտ» կազմակերպությունների հետ համագործակցությամբ և աջակցությամբ:

Գիտաժողովի քննարկման թիրախում ձերբակալման ընթացքում խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ դրսևորումների կանխարգելման և վերջինիս արդյունավետությունը բարձրացնելու հիմնախնդիրն էր: Ուստի, միջոցառման ընթացքում մասնակիցները և զեկուցողները քննարկել են խոշտանգման կանխարգելմանն ուղղված իրավական և ընթացակարգային երաշխիքների կիրառմանը, հարցաքննությունների վարման լավագույն մեթոդներին և տակտիկական հնարքներին առնչվող հիմնահարցերը, և այս համատեքստում անդամ պետությունների առջև ծառացած հիմնական խնդիրները:

Փորձագետներ Ջ. Կոզման և Ռ. Քարվերն անդրադարձել են խոշտանգումների կանխարգելման համատեքստում քրեական արդարադատության համակարգի և համապատասխան երաշխիքների դերին և նշանակությանը: Հատուկ շեշտադրվել է դատավարական երաշխիքների, արդյունավետ քննության և բողոքարկման գործուն կառուցակարգերի կարևորությունը: Ամփոփելով «Արդյոք խոշտանգման կանխարգելումը գործում է» գիտական ուսումնասիրության արդյունքները, որը հիմնված է մի շարք պետություններում առկա իրավիճակի ուսումնասիրության վրա՝ զեկուցողներն առանձնացրել են այն երաշխիքները, որոնք լավագույնս են նպաստում խոշտանգումների կանխարգելմանը:

Անդրադառնալով հարցաքննությունների վարման լավագույն մեթոդներին և տակտիկական հնարքներին՝ փորձագետներ Օ. Ռեքլյուն և Լ. Էլիսոնը ներկայացրել են հարցաքննությունների և քննչական հարցազրույցների տարբերությունները, քննչական հարցազրույցների կառուցվածքը և մեթոդաբանությունը, ինչպես նաև պրակտիկ օրինակների վրա դրա արդյունավետությունը: Շեշտադրվել է, որ դատավարական նվազագույն երաշխիքների հետ միասին խոշտանգումների

կանխարգելման համատեքստում հատկապես կարևորվում է նաև անձին ձերբակալելիս և հարցաքննելիս կիրառվող մեթոդաբանությունը: Փորձագետներն ընդգծել են, որ փորձը ցույց է տալիս, որ վստահության հիման վրա իրականացված հարցազրույցը ամենաապահով և արդյունավետ միջոցն է հանցագործությունների բացահայտման համար:

Գիտաժողովը ոլորտի լավագույն փորձի փոխանակման հարթակ էր, որը նպաստեց ԵԽ մի շարք անդամ պետությունների ներկայացուցիչների և ոլորտի առաջադեմ փորձագետների միջև ակտիվ քննարկմանը և խոշտանգումների կանխարգելման բնագավառում հաջողված օրինակների վերհանմանը: